Армянский химический журнал, т. 37, № 8, стр. 534—535 (1984 г.)

ԽՐՈՆԻԿԱ

ՄԵՆԴԵԼԵԵՎՅԱՆ ՏԱՍՆԵՐԵՔՍԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Այս տարվա փետրվարի 8-ին լրացավ ռուս աշխարհահռչակ գիտնական Դմիտրի Իվանովիչ Մենդելեևի ծննդյան 150-ամյակը։ Սովետական միության գիտնականները, ամբողջ առաջադեմ մարդկությունը մեծ շուքով նշեցին մեծագույն գիտնական-էնցիկլոպեդիստի, տեսական և կիրառական քիմիայի մի շարք ուղղությունների հիմնադրի, էլեմենտների պարբերական համակարգի հայտնաբերողի հոբելյանը։

Այդ փառապանծ տարելիցին էր նվիրված ընդհանուր և կիրառական քիմիայի Մենդելեևյան XIII համագումարը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Լենինգրադում մայիսի 22-ին։

Հոբելյանին նվիրված ներկա համագումարը բացեց ՍՍՀՄ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Յու. Ա. Օվչիննիկովը։ Նա նշեց Դ. Ի. Մենդելեևի անգնահատելի դերը գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի և ժողովրդական կրթության զարգացման գործում։ Այդ թեմաներով կարդացվեցին մի շարք հետաքրքիր զեկուցումներ։ 2000-ից ավելի պատգամավորներից բացի, համագումարին մասնակցում էին արտասահմանյան բազմաթիվ հյուրեր, գիտնականներ և պետական գործիչներ։

ՍՄԿԿ Լենինգրադի մարզկոմի քարտուղար Լ. Ն. Զայկովը հրապարակեց ՍՄԿԿ Կենտկոմի ողջույնը՝ ուղղված համագումարի պատգամավորներին և հյուրերին, որը համագումարի մասնակիցների կողմից ընդունվեց ջերմորեն։

Ինչպես նշված էր ՍՄԿԿ Կենտկոմի ողջույնում՝ սովետական քիմիկոսները մեծ ներդրում ունեն ժողովրդական տնտեսության արագ զարգացման գլխավոր գործոններից մեկի՝ քիմիացման գործում։

Քիմիական արդյունաբերության արագ զարգացումը կարևոր նշանակություն ունի գիտա-տեխնիկական առաջընթացի գործում, այն նպաստում է պարենային և էներգետիկ ծրագրերի, XXVI համագումարի և ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հետագա պլենումների որոշումների անթերի կատարմանը։

Մեր երկրում քիմիական գիտության և արդյունաբերության զարգացման բարձր մակարդակով է պայմանավորված արտասահմանյան նշանավոր գիտնականների, միջազգային գիտական կազմակերպությունների, սոցիալիստական երկրների քիմիական արդյունաբերության մասնագետների մասնակցությունը համագումարին։

Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ՍՍՀՄ քիմիական արդյունաբերության մինիստր Վ. Վ. Լիստովը «Քիմիական արդյունաբերության զարգացման պրոբլեմները և հեռանկարները» թեմայով, ՍՍՀՄ ԳԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Ն. Մ. Ժավորոնկովը «Դ. Ի. Մենդելեևը—գիտնական և մտածող» թեմայով, Լենինյան մրցանակի դափնեկիր, Համամիութենական քիմիական ընկերության պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Վ. Ֆոկինը «Դ. Ի. Մենդելեևը—ռուսական ֆիզիկա-քիմիական ընկերության կազմակերպող» թեմայով, ԳԴՀ ազգային ճակատի ազգային խորհրդի նախագահ, ԳԴՀ ԳԱ անօրգանական քիմիայի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Լ. Կոլդիցան «Դ. Ի. Մենդելեևի կողմից կանխատե-

ուած էլեմենտների քիմիայի ժամանակակից վիճակը» թեմայով, Սոցիալիստական աշխատանքի հերոս Վ. Ի. Սպիցինը «Դ. Ի. Մենդելեևի պարբերական օրենքը նյութի կառուցվածքի ժամանակակից պատկերացման լույսի տակ» թեմայով, ՍՍՀՄ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Ա. Կապտյուգը «ԷՀՄ կիրառման վիճակը և հեռանկարները օրգանական քիմիայի խնդիրների լուծման ժամանակ» թեմայով, ճապոնացի պրոֆեսոր Կ. Սաիտոն «Դ. Ի. Մենդելեևի գաղափարների զարգացումը ժամանակակից անօրգանական քիմիայում» թեմայով, ՍՍՀՄ նավթամշակման և նավթարդյունաբերության մինիստր Վ. Ս. Ֆեոդորովը «Դ. Ի. Մենդելեևը և նավթաքիմիայի ու նավթամշակման պրոբլեմները» թեմայով և ուրիշներ։

Մեր հանրապետությունից համագումարին մասնակցում էին քիմիական գիտության և քիմիական արդյունաբերության զարգացման գործում նշանակալից ներդրում ունեցող մի խումբ անվանի գիտնականներ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բաբայանը, Ս. Մացոյանը, Ս. Վարդանյանը, թղթակից-անդամներ Ա. Գալոյանը, Կ. Կոստանյանը, Դ. Մենդելեևի անվան Համամիութենական քիմիական ընկերության Հայկական հանրապետության վարչության նախագահ, պրոֆ. Հ. Բաբայանը։ Հայաստանի բուհերը ներկայացնում էր տոկերիս հեղինակը։

Արտասահմանյան գիտնականների կողմից համագումարին ողջունեց Եվրոպական քիմիական ընկերության և ԳՖՀ քիմիական ընկերության գլխավոր քարտուղար, դոկտոր Ռ. Ֆրիշը։

Ս. Ն. ԱՎԱԳՅԱՆ, պրոֆեսոր